Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Լուսաձորի հիմնականդպրոց» ՊՈԱԿ-ի Աշխարհագրություն(6 դասաժամ), կերպարվեստ(5 դասաժամ),դասվար(17 դասաժամ),հայոց լեզու և գրականություն(10 դասաժամ), ֆիզկուլտուրա(10 դասաժամ) զինղեկ(0.5 հաստիք) ուսուցչի թափուրտեղերի համար:

Մրցույթնանցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլնանցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայությանդեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թ սեպտեմբերի 13 -ից մինչև 2023թ սեպտեմբերի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. հոկտտեմբերի 4-ին՝ ժամը 13:00-ին**, Տավուշի մարզի Լուսաձորի հիմնական դպրոցում, հասցե՝ՀՀ Տավուշի մարզ գյուղ Լուսաձոր փողոց7 շենք9: Տեղեկությունների համար զանգահարել 094522707 հեռախոսահամարով: